Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 361 - Ա
որոշման

ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆ, ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսված է հիմնել երկու Երիտասարդական կենտրոններ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, որոնք ծառայելու են երիտասարդների զբաղունակության և ձեռներեցության ներուժի զարգացմանը, տարբեր երկրների երիտասարդների միջև փորձի փոխանակմանը: Ծրագիրն աջակցելու է նշված մարզերի Միասնական սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, դպրոցների և երիտասարդների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանը և համագործակցության ամրապնդմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասին օրենքներով նախատեսվող արտոնություններից:
3.	Բարեգործը և ֆինանսավորման աղբյուրը	BildungsChancen gGmbH (Berlin, Germany, at Pariser Platz 6, 10117 Berlin, with an additional office in Essen at Baedekerstraße 1, 45128 Essen.) գերմանական ընկերությունը և UOU Մանկական Գյուղեր Համաշխարհային կազմակերպությունը (հասցե՝ Գերմանիա, 80339 Մյունխեն, Ռիդլերշտրասե 55)
4.	Ծրագրի կատարողը	«UOU-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 03517269, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հրաչյա Քոչարի 8 բնակարան 18-19):

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	456,926,017.81 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրում ընդգրկված են Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ 15-35 տարեկան 400 երիտասարդներ, միասնական սոցիալական կենտրոնների 22 ներկայացուցիչներ, դպրոցների 226 ուսուցիչներ և 12 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 22-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) նախատեսվում է շահառուներին տրամադրել տնտեսական կայունություն ապահովող պարագաներ և ծառայություններ (աշխատանքային գործիքներ, մեղվի փեթակներ և այլն), դրամաշնորհներ, բիզնես խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն: Շահառուների համար կազմակերպել դասընթացներ, քոուչինգ, փորձնակություն, փորձի փոխանակման նպատակով հանդիպումներ/քննարկումներ, տրամադրել դասընթացների համար անհրաժեշտ պարագաներ և նյութեր: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 22-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 179,695,832.43 դրամի չափով. 2) կատարվելու է ծրագրի իրականացման նպատակով ներգրավված մասնագիտական աշխատակիցների աշխատավարձի վարձատրություն: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 22-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 170,409,120 դրամի չափով:. 3) նախատեսվում է ձեռք բերել սարքավորումներ և գույք, տրանսպորտային ծառայություններ, վառելանյութ, իրականացնել տարածքի, գույքի և սարքավորումների վերանորոգում, պահպանում և արդիականացում: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 22-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 32,084,900 դրամի չափով.

		4) միջոցառումների ընթացքում նախատեսվում է կազմակերպական ծախսեր՝ վարչական անձնակազմի աշխատակիցների վարձատրության, առողջության ապահովագրության, գործուղման, հյուրանոցային, տպագրական, ֆիլմի նկարահանման, կոմունալ, բանկային և փոստային ծառայությունների, աշխատակիցների համար դասընթացների, սուպերվիզիաների կազմակերպման, հետազոտական ծառայությունների իրականացման, գրասենյակային պարագաների ձեռքբերման, ինչպես նաև հանդիպումների/միջոցառումների ընթացքում հյուրասիրությունների համար ծախսեր: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 22-ից մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 74,736,225.38 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) իրականացվող դասընթացների (այդ թվում արտագնա), հանդիպումների, թերապիաների ընթացքում հյուրասիրությունների կազմակերպման և հյուրանոցային ծառայությունների, սրահի վարձակալության և անհրաժեշտ պարագաների (սոցիալ-հոգեբանական աջակցության համար անհրաժեշտ գործիքներ և խաղեր, գրենական պիտույքներ, սուրճ, թեյ, միրգ, խմորեղեն, հյութեր, շշալցված ջուր) ձեռքբերում, աշխատանքային նյութերի և տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 33,908,758 դրամի չափով. 2) դասընթացների իրականացման նպատակով դասընթացավարների ծառայությունների ձեռքբերում՝ 1,587,474 դրամի չափով. 3) մասնակիցների համար մասնագիտական դասընթացների վճարում և մասնագիտական գործիքների ձեռքբերում՝ 83,100,000 դրամի չափով. 4) տարածքի, գույքի և սարքավորումների վերանորոգման, պահպանման և արդիականացման ծառայությունների ձեռքբերում, գույքի և տեխնիկայի (կահույք, կահավորանք, կենցաղային տեխնիկա, համակարգչային սարքավորումներ և այլ անհրաժեշտ պարագաներ) ձեռքբերում՝ 27,084,900 դրամի չափով. 5) տրանսպորտային ծառայությունների (տաքսի և բեռնափոխադրում) և վառելանյութի ձեռքբերում (օգտագործվում է տնայցերի և ծրագրային այլ գործառնությունների ընթացքում)՝ 9,436,000 դրամի չափով.

		6) ծրագրի տեսանելիությունն ապահովելու և իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով (թռուցիկների, պաստառների և նմանատիպ այլ նյութերի) տպագրական նյութերի և ծառայությունների ձեռքբերում՝ 2,250,000 դրամի չափով. 7) հետազոտական, վերլուծական ծառայությունների ձեռքբերում՝ 1,200,000 դրամի չափով. 8) գրասենյակային պարագաների, տնտեսական նյութերի, կապի և հեռահաղորդակցության ծառայությունների, տարածքի մաքրման ծառայության ձեռքբերում՝ 13,352,209 դրամի չափով. 9) ծրագրի փակման/բացման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալություն և հյուրասիրության կազմակերպում՝ 3,000,000 դրամի չափով. 10) ծրագրի շահառուների և աշխատակիցների համար հոգեբանական ծառայությունների (սուպերվիզիա) ձեռքբերում՝ 1,820,000 դրամի չափով. 11) ծրագիրն իրականացնող երկրների միջև փորձի փոխանակման նպատակով աշխատակիցների, ինչպես նաև ծրագրի շահառուների գործուղման համար ավիատոմսերի, հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 9,028,750 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) ծրագրի փակման/բացման, դասընթացների անցկացման նպատակով կազմակերպվող միջոցառումների համար տարածքի/դահլիճի վարձակալություն և հյուրասիրության կազմակեր-պում՝ 7,500,000 դրամի չափով. 2) գրասենյակային պարագաների, տնտեսական, տպագրական նյութերի, կապի և հեռահաղորդակցության ծառայությունների, բանկային ծառայությունների, կենտրոնների մաքրման ծառայության ձեռքբերում՝ 18,109,059 դրամի չափով. 3) ծրագրում աշխատող անձնակազմի հավաքագրման (աշխատանքի հայտարարության տեղադրում, տպագրության) ծախսեր՝ 680,000 դրամի չափով. 4) հոգեբանական աջակցություն աշխատակիցներին (սուպերվիզիա)՝ 1,020,000 դրամի չափով. 5) աշխատակազմի ծախսեր (ծրագրի ֆինանսական և ադմինիստրատիվ մասնագետի աշխատավարձ և ողջ անձնակազմի ապահովագրություն)՝ 33,198,356.38 դրամի չափով. 6) ծրագրի համակարգման, մոնիթորինգի ծախսեր՝ 750,000 դրամի չափով.

		7) հետազոտական, վերլուծական ծառայությունների ձեռքբերում՝ 1,200,000 դրամի չափով. 8) ծրագիրն իրականացնող երկրների միջև փորձի փոխանակման նպատակով աշխատակիցների, ինչպես նաև ծրագրի շահառուների գործուղման համար ավիատոմսերի, հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում, օրապահիկների վճարում՝ 10,028,750 դրամի չափով. 9) ծրագրի տեսանելիությունն ապահովելու և իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով (թռուցիկների, պաստառների և նմանատիպ այլ նյութերի) տպագրական նյութերի և ծառայությունների ձեռքբերում՝ 2,250,000 դրամի չափով:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ինչպես նաև Երևանի քաղաքապետի աշխատակազմի, Երևանի բոլոր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության բոլոր մարզպետների աշխատակազմերի, տեղական ինքնակառավարման մարմինների, Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 22-ի համար 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ